



PEARLS OF ARMENIAN HERITAGE

Ծերենց (1822-1888)

Արեւմտահայ վիպագրութիւնը ձեւաւորուած է ֆրանսական, գերմանական, եւ անգլիական գրականութեան ոլորտին մէջ: Պոլսոյ եւ Իզմիրի մէջ թարգմանուեցան այս գրականութիւններուն մեծագոյն վէպերը եւ անոնց ազդեցութեան տակ ծնաւ արեւմտահայ վիպագրութեան շարժումը: Ծերենց, Մամուրեան եւ Տիսաբ եղան այս շարժումին գլխաւոր դէմքերը:

Ծերենց, իսկական անունով՝ Յովսէփ Շիշմանեան, ծնած է Պոլիս, եւ կրթութիւնը ստացած է Վենետիկ, Սբ. Ղազար: Վարած է Օրթոգիւղի Լուսաւորչեան Վարժարանին մէջ ուսուցչական պաշտօն: 1843-ին անցած է Թիֆլիս եւ անկէ ալ շրջած է հայրենի աշխարհը, ծանօթանալով հայ ժողովուրդին կեանքին եւ տառապանքներուն: Բժշկական ուսումներուն կը ձեռնարկէ եւ 1853-ին Փարիզի մէջ կը ստանայ վկայականը եւ կը վերադառնայ Պոլիս:

Գործօն մասնակցութիւն կը բերէ Մ. Պէշիկթաշլեանի սկսած շարժումին՝ միացնելու հայ համայնքը եւ վերացնելու անիմաստ ու աննպատակ կագ ու կոհները: Կ'անդամակցի “Համագգեաց” ընկերութեան, ինչպէս նաեւ “Մուրատ Ռափայէլեան Նախկին Սանուց Միութեան,” ամէն կերպով աջակցելով Պէշիկթաշլեանի եւ Գրիգոր Օտեանի:

1875-ին կը փոխադրուի Կիպրոս, որպէս կառավարական բժիշկ, եւ այստեղ է որ կը ձեռնարկէ գրել իր վէպերը:

Առաջին վէպը եղաւ “Թորոս Լեւոնի” (1878) որուն նիւթը առնուած է կիլիկեան պատմութենէն: Վէպին կորիզը կը կազմէ Լեւոն իշխանին եւ իր երկու որդիներուն՝ Թորոսի եւ Ռուբէնի Բիզանդիոն բանտարկեալ տարուիլը Կոստանդին Պերբերուժէն կայսրէն: Լեւոն եւ Ռուբէն բանտին մէջ կը մեռնին, բայց Թորոս հնարագիտութեամբ կը փախչի, կ'անցնի Կիպրոս, եւ ապա Կիլիկիա եւ կը վերագրաւէ հայրենի երկրին քաղաքները:

Երկրորդ վէպը եղաւ “Երկունք Թ. Դարու”ն, որ զետեղուած է Բագրատունիներու թագաւորութիւնը կանխող ճգնաժամային տարիներուն մէջ: Վէպին հերոսն է Յովհան Սասունցի քաջ լեռնականը, որ կը յաջողի խումբ մը կազմել անձնուէր եւ քաջ զինուորականներով, որոնք կը դիմադրեն անմիաբան նախարարներուն եւ թոյլ չեն տար որ խորտակուի ազգային միութիւնը:

Երրորդ վէպն է “Թէոդորոս Ռշտունի”ն, որ զետեղուած է արաբական արշաւանքի շրջանի տարիներուն մէջ: Ծերենց չունի Րաֆֆիի երեակայութեան թռիչքը, թէւ երկու գրագէտներուն համար վէպը պարզապէս միջոց մըն է հայրենասիրութիւն եւ ազգային միութեան հոգին զարգացնելու՝ հայրենիքի գաղափարին բարձրութիւնն ու գեղեցկութիւնը ներկայացնելով:

(Քաղուած Հ. Մեսրոպ Վրդ. Ճանաչեանի “Հայ Գրականութեան Նոր Շրջանի Համառոտ Պատմութիւն” հատորէն)

